

13087



# Մ Պ Ա Գ Ի Բ

ԱԶԳ. ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԴԻՒԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ

## ՄԱՏՈՒՑՈՒԱԾ

Ա.Զ.Գ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ԿՈՂՄԵ

## ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀ. ՃԱՌՈՒՋԻՆ

ԴԻՒԱՆ ԱԶԳ. ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԴԻՒԱՆԱՏՈՒՆ

1. Աղդային Պատրիարքարանը ունի երկու Դիւանատուն,  
Ա. — Փոխանորդական Դիւանատուն  
Բ. — Պատրիարքական Դիւանատուն:  
2. Փոխանորդական Դիւանատունը կը վարէ՝ Կ. Պոլսոյ բոլոր թաղերուն և  
Կ. Պոլսոյ ևնթարկուած ամէն հաստատութեանց գիւանական գործերը:  
3. Պատրիարքական Դիւանատունը կը վարէ Կ. Պոլսոյ թեմին (Փոխանորդական Դիւանին միջոցաւ), Տաճկատանի գաւառական թեմերու, Երուսաղէմի Պատրիարքութեան, Սիսի եւ Աղմամարի Կաթողիկոսութեանց, Խոչողէս նաեւ արտասահմանի մէջ Պոլսոյ Պատրիարքութեան ենթակայ թեմերու և Ամենայն Հայոց Հայրապետութեան հետ Պատրիարքարանի Դիւանական գործերը:

Պատրիարքական Դիւանատունը կը վարէ նաեւ Բարձրադրոյն Դրան հետ ամէն յարաբերութիւնները:

4. Պատրիարքական Դիւանատունը ըստ Աղդ. Սահմանադրութեան 13 րդ յօդուածի, կը բաժնուի շորս դրասենեակներու,

Ա. Թղթակցութեանց գրասենեակ  
Բ. Արձանադրութեանց »  
Գ. Համարակալութեան »  
Դ. Աղդահամարի »

(Վիճակագրական)

5. Թղթակցութեանց գրասենեակը կը բաժնուի հետեւեալ ճիւղերու:

Ա. — Աղդ. Կեդրոնական վարչութեան բազարական, Կրօնական եւ Խառն Ժողովներու որոշումներ, առենադրութիւններ, արձանադրութիւններ և ասոնց վերաբերեալ թղթակցութիւններ:

Բ. — Ռւսումնական Խորհրդոյ որոշումներ, ատենադրութիւններ, արձանադրութիւններ եւ անսոնց վերաբերեալ թղթակցութիւններ:

Գ. — Տնտեսական Խորհրդոյ որո-

շումներ, ատենագրութիւններ, արձանագրութիւններ և ասոնց վերաբերեալ թղթակյութիւնք :

Դ. — Ելեւմտից Հոդաբարձութեան որոշումներ, ատենագրութիւններ, արձանագրութիւններ եւ անոնց վերաբերեալ թղթակյութիւնք :

Ե. — Դատաստանական Խորհրդոյ որոշումներ, ատենագրութիւններ, արձանագրութիւններ եւ անոնց վերաբերեալ թղթակյութիւնք :

Զ. — Վանօրէից Խորհրդոյ որոշումներ, ատենագրութիւններ, արձանագրութիւններ եւ անոնց վերաբերեալ թղթակյութիւնք :

Է. — Կտակաց Հոդաբարձութեան որոշումներ, ատենագրութիւններ, արձանագրութիւններ եւ անոնց վերաբերեալ թղթակյութիւնք :

Ը. — Պետական Պաշտօնատանց հետ Թուրքերէն թղթակյութեան և օտար լեզուներու թղթակյութիւնք և թարգմանութիւնք :

Թ. — Գաւառային Հարստահարութեանց վերաբերեալ արձանագրութիւնք :

Ժ. — Ազգային Բնդհանուր Ժողովոյ ատենագրութիւնք, արձանագրութիւնք եւ թղթակյութիւնք :

ԺԱ. — Զանազնք :

Ի. — Արձանագրութեան Գրասենեակը կը բաժնուի հետեւեալ ճիւղերու :

Ջ. — Ստացուած եւ յուղարկուած ամէն լեզուէ և ամէն տեսակ թղթակյութիւններու, պաշտօնաթղթերու թիւնք :

Զ. — Ամէն թաղի, գիւղի, քալութիւններու թիւնք :

ԳԻ. — Վիճակի, Աղդ. Հաստատութեանց եւ Բնկերութեանց վերաբերեալ կալուածական վաւերաթրւղթերու ամէն մանրամասնաթեամբ, ինչպէս՝ աեսակի, արժէք, սահմանք եւն. մանաւոր տումարներու մէջ արձանագրութիւնք, այլ տեսակ շարժուն և անշարժ ստացուածոց մանրամասն արձանագրութիւնք : Այս ամէնը թէ՛ աեսակի կարգաւ եւ թէ՛ ամէն մէկ վիճակի կամ թեմի յատուկ :

Գ. — Յոլոր վանկերու ընդ որս Սոսյ եւ Աղթամարայ եւ Երուսաղէմի վանուց, վանքապատկան բոլոր անշարժու շարժուն ստացուածոց մանաւոր արձանագրութիւնք :

Դ. — Թուարկութեամբ եւ ցուցակադրութեամբ տահպանութիւն ամէն տեսակ համարակալութեան վերաբերեալ թուղթերու, պաշտօնագրեր, թըղթակյութիւնք՝ որոնց վերաբերեալ գործողութիւնք աւարտած են :

Ե. — Համարակալութեան Գրասենեակը կը բաժնուի հետեւեալ ճիւղերու :

Զ. — Ազգային արոց եւ այլ հասոյթից յատուկ համարակալութեան եւ տումարներու արձանագրութիւնք :

Բ. — Բատ պիտաճէի, ծախուց յատուկ համարակալութեան եւ տումարներու արձանագրութիւնք :

Գ. — Մայր Տումարի արձանագրութիւնք (ըստ հաշուազիտական - Տոմարակալութեան ամէնակատարելագործեալ գրութեան) :

Դ. — Պատրիարքարանի Սնտուկ եւ գանձումներու ու վճարումներու գործողութիւնք եւ անոնց վերաբերեալ արձանագրութիւնք :

(Համարակալութեան Գրասենեակի

մէջ կը պահուին ընկալազրեր, պարտամուրհակներ, պանքայի հետ հաշուական թղթակցութիւնք, ստորագրեալ հաշուեկիոներ եւ ամէն տեսակ հաշուական թղթեր, վաւերայուցեալ տումարական արձանագրութեամբ: Եւ ամբողջական հաշուեատութենէ վերջ միայն ի պահ կը դրուին Արձանագրութեանց Գրասենեակին Դ. ճիւղին մէջ) :

Ծ. Աղդամարի Գրասենեակը կը բաժնուի հետեւեալ ճիւղերու:

Ա. — Պոլսոյ եւ Հրակայից, բոլոր Առաջնորդական կամ Վիճակային թեմերու ծնունդք, մահք, ամսւանութիւնք, սեռի, արուեստի եւն. դասկարգութեամբ, վիճակադրական կատարելագործեալ դրութեամբ արձանագրութիւնք :

Բ. — Դպրոցներու, աշակերտաց, Ուսուցչաց եւն. ուսումնական վիճակադրութիւնք :

Գ. — Աղդ. արոց, Օսմ. Երեսիոխանական ընտրութեանց եւ Զինուորագրութեան օրինաց ծառայելու համար մանաւոր վիճակադրական արձանագրութիւնք :

Դ. — Հայաբնակ վայրերու ոչ-հայ բնակչաց վերաբերեալ բաղդատական վիճակադրական արձանագրութիւնք :

Ե. Աղդամարի Գրասենեակը պարտաւոր է որոշեալ ժամանակներ՝ առնուազն տարին մի անդամ՝ տեղեկագիրներ պատրաստել, ուսումնաիրելով Աղդին նիւթական եւ բարոյական զարդացման կամ յետադիմութեան ընթացքը :

Զ. Վերողը կը պահութեալ չորս դլխաւոր Գրասենեակները իրենց ճիւղերուն վերաբերեալ աշխատութեանց կանոնաւորապէս կատարման համար բաւական թուով պաշտօնեայները կ'ունենան, ու Աղթամարայ կաթողիկոսութիւնները,

ըստ թիւը կրնայ աւելնալ կամ պակսիլ ըստ պահանջմանց գործառնութեանց :

10. Պատրիարքարանի ամէն պաշտօնեայ, ըստ Աղդային Սահմանադրութեան 15րդ յօդուածի, պատասխանատու է անմիջապէս իւր Դիւանապետին կամ Ելմտական Տեսչին :

11. Վերողը կը պահութեալ չորս դլխաւոր դրասենեակներէն թղթակցութեանց, Աղդամարի և Արձանագրութեանց պաշտօնէութիւնը, ըստ Աղդ. Սահմանագրութեան 14րդ յօդուածի, Դիւանապետի անմիջական հրամանին ներքեւ կը գտնուին: Իսկ Համարակալութեան Գրասենեակի պաշտօնէութիւնը Ելմտական Տեսչին հրամանին ներքեւ կը գործէ :

12. Ելմտական Տեսուչը Աղդ. Տընտեսական եւ Ելմտական Խորհուրդներու որոշմանց համաձայն գործառնութեանց առօրեայ վարիչը ու Համարակալութեան Դիւանի պատասխանատու Տնօրին-Հոկիին է :

13. Աղդ. Պատրիարքարանի ամբողջ դիւանական պաշտօնէութիւնը կ'ընտրուի մրցմամբ, բայց ի Դիւանապետէն եւ Ելմտական Տեսչին: Դիւանական պաշտօնէութեան ընտրութիւն ամանական պատասխանատու Ելեմտական Տեսչի կարծիքը ևս բնականարար պիտի առացուի :

Պատրիարքարանի պաշտօնէութեան ընդունելութեան, յառաջացման, հանդիսատեան պայմաններու մասին մասնաւոր կանոնագրի մը պիտի պատրաստուի Աղդ. Վարչութեան կողմէ:

14. Ամէն Առաջնորդական կամ Վիճակային թեմ, ինչպէս նաև Պատրիարքական Փոխանորդութիւնը, Երեսիոխանական Տեսչին Աղթամարայ կաթողիկոսութիւնները,

պարտաւոր են ունենալ իրենց Դիւա-  
նասունները թղթակցութեանց , Ար-  
ձանազրութեանց , Աղդահամարի եւ  
Համարակալութեան բաժանմունքով  
(ինչպէս որ վերը բացատրուած է ) եւ  
ասոնց կարեւորութեան համաձայն  
բաւականաթիւ գիւտանադպիրներով ու  
հայուակայներով :

15. Ամէն Առաջնորդական կամ  
Վիճակային թեմերու, ինչպէս նաև  
Պատրիարքական Փօխանորդութեան,  
Երուսաղէմի Պատրիարքութեան, Սաոյ  
և Ազթամարայ Կաթողիկոսութիւննե-  
րու, Դիւանատան և ասոնց Գրասեն-  
եակիններու գործառնութիւնները սոյն  
Կանոնագրի 5րդ, 6րդ, 7րդ և 8րդ յօդ-  
ուածներով որոշեալ ստորաբաժանում-  
ները պարտին ունենալ:

16. Ա.մէն Առաջնորդական կամ  
Վիճակային թեմեր, ինչպէս նաեւ  
Պատրիարքական Փոխանորդութիւնը,  
Երուսաղէմի Պատրիարքութիւնը, Սայ  
եւ Աղթամարայ Կաթողիկոսութիւն-  
ները, ըստ Աղդ. Սահմանադրութեան  
14րդ յօդուածի պարտին ունենալ Դի-  
ւանապետ մը, որոնց հանդէպ պա-  
տասխանատու են Դիւանատանց պաշ-  
տօնէութիւնը :

Ասոնք կ'ընտրուին մրցմամբ, որ կը  
կատարուի ձեռամբ մասնագէտներու,  
ըստ տնօրինութեան Գաւառական վար-  
չութեան Քաղաք Ժողովներու:

ԱԶԳԱՅԻՆ ՏՈՒՐՔ

17. Բատ Աղջ . Սահմանադրութեան 90րդ յօդուածի, ամէն Հայ անհատ պարտաւոր է Աղքային Տուրբ անուամբ տարեկան գումար մը վճարել Աղջ. Պատրիարքարանի, աղդին տեղական եւ ընդհ. ժախուց համար :

18. Աղջային Տուրքէ աղատ են՝  
Ո. — Անշախիահճանեռո.

Ա. — Անշափահամեները .  
Բ. — Ապրուսի համար աշխատանք  
չունեցողները .

Գ. — Եպրուսակ միջոցէ զուբկ տնանկ  
աղքաները .

Պ. — Աստիկանո թեան եւ զինուո-  
րական ծառայութեան մէջ գտնուող  
զինուորները եւ փոքր սպայները :

19. Աղջ. Տուրքի բաշխումը կը  
կատարուի ըստ նիւթական կարգու-  
թեան մէն մի անհատի, Բրօկրէսիմ

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ

20. Թէ՛ ի Կ. Պօլիս և թէ՛ ի գաւառու Առաջնորդական թեմերու կամ վիճակներու մէջ հաշուակալութեան միօրինակ դրութիւն կը դործադրուի:

Տնտեսական և Ելիությ Խորհուրդ-  
ներ, Տնտեսական Ցեսուչը և Եթէ  
Հարկ է՝ մասնագիտներ միանալով՝ ա-  
մէն աեսակ հաշուետումարներու, հաշ-  
ուեթուղթերու, լնկալագրերու, պայ-  
մանագրերու եւլն. ձեւեր և ասոնց  
գործածութեան համար հարկաւոր  
հրահանգներ կը պատրաստեն ամէն  
մանրամասնութեամբ։ Ասոնք կեցը.

Վարչութեան Քաղաքական Ժողովին  
կը վաւերացուին և ամենուրեք պար-  
աւորիչ են :

Առանց վաւելրական օրինաւոր թուղթներու և ոչ մի հաշուեցոյց չէ ընդունելի:

21. Ազգային Հաշուական տարե-  
դրություն է Յունուար 1ը:

Ամէն տեսակ հաշուեցոյց, վիճակա-  
զոյց, մարդահարմար, պիտուծէ կը փակ-  
ուին Յէկտեմբերին։ Ամէն տարւոյ  
Ասլրիի սկիբրը նախօրդ տարւոյ հա-  
ռուական տումարները փակուած, հա-  
ռուեկշիռները պատրաստուած և հա-  
ռուական տեղեկագիրները ամբողջա-  
ւած աէտք է սուան։

የተተሸቃፋ

22. Ամէն տարւոյ Սեպտեմբեր  
ամսոյ սկիզբը Գառասներու մէջ՝ Գա-  
ռառային թեմական կամ փիճակային  
եւ Փօխանորդարանի մէջ՝ Պողոյ եւ  
շըջակայից Փօխանորդարանի իրաւա-  
սութեան ներքե գտնուող հաստատու-  
թեանց յառաջիկայ տարւոյ պիտածէի  
ծրագիրը պատրաստուած պէտք է  
Քլլայ:

Եթէ այն թուականին պիտօնէք  
ծրագիր մը չէ պատրաստ, անմիջապէս  
քննութիւն կը կատարուի եւ ասոնց  
պատճառ եղաղները պատասխանատու  
կը մնան:

23. Վերողըեալ 22րդ յօդուածի  
մէջ նշանակեալ պիտօնէի ծրագիրը  
մինչև Հոկ. 15 Դաւառային և Պալայ  
ու շրջակայից պատկանեալ Աղդային  
հասաստութեանց և մարմիններու  
կողմանէ պատրաստուելէ և Գաւառա-  
յին Աղդային Վարչութեանց կողմանէ  
քննուելէ, և Դաւառ. Աղդ. Բնդհ. Ժո-  
ղովներու կողմանէ ընդունուելէ վերջ  
կ'ուղարկուին Կ. Պալայ Աեգը. Վար-  
չութեան Տնտես. Խորհրդու:

Կեդր. Վարչութեան Տնտես. Խոր-  
հուրդը նոյեմբեր 1էն մինչև Դեկտ. 1,  
մէկ ամսուան միջոցին հաւաքելով Գա-  
ւառական պիւտճէի ծրագրերը և մի-  
եւնոյն ժամանակ Սեպտ. էն մինչեւ  
Դեկտ. 1 պատրաստելով ու Աղդ. Քա-  
ղաք. Ժողովոյ քննութեան ենթարկե-  
լով Աղդ. Կեդր. պիւտճէն, կը կազմէ  
Աղդ. ընդհանուր պիւտճէի ծրագիրը  
և Աղդ. Կեդր. Վարչութեան Քաղաք.  
Ժողովոյ միջոցաւ կը ներկայացնէ Աղդ. Երեսափոխանական Ընդհ. Ժողովոյ :

Նոյն միամսեայ միջոցին Ազգ . Երես-  
փոխանական Ընդհ. Ժաղովոյ Կողմանէ  
նախապէս անուանեալ սլիւտնէի Յանձ-

նաժողովը կը քննէ ներկայանալին  
պիտօնէին զանազան մասերը և պատ-  
րաստած կ'ըլլայ նաև խը տեղեկադի-  
րը, զոր միանգամայն կը ներկայացնէ  
Ընդհանուր Ժողովոյ :

24. Գաւառ. Աղդ. Բնդհ. Ժողով-ներու կողմանէ ընդունաւած պիտաճէի ժրագիրը Կ. Պալսոյ Աղդ. Բնդհ. Ժողովը կրնայ վաւերացնել նոյնութեամբ և կամ բարեխփոխել, իսկ Պալսոյ ու ըլակայից, Սայ, Աղթամարայ, Երուազգէմի վանքերու և կեդր. պիտաճէ-ներու ծրագիրը կրնայ վաւերացնել կամ փոխել և կամ ամբողջութեամբը մերժել:

25. Եթէ որ և է պատճառաւ մին-  
և Յունուար 1 կան պիւտճէի մասեր  
որք Աղդ. Երեսփոխանական Ընդհ. Փո-  
լովէն աակաւին վաւերացուած չըլլան  
ս'յն վարչութիւնները որոնց կը վերա-  
մերին ատոնք, արտօնեալ կը նկատուին  
մինչեւ որ նորերը վաւերացուին՝ նա-  
սորդ տարւոյ սովորական պիւտճէի  
իրաւ ընթանալ:

26. Մերժուած կամ բարեփոխուած պիտօնէն անմիջապէս պատկանեալ Աղդ. Վարչովթեան վերադարձուելով՝ նոյն Վարչով թիւնը պարտաւոր առ առաւելն մինչեւ երկու ամիս ոյն կանոնագրի 23րդ յօդուածի աաջին պարբերութեան համաձայն նոր լիւտօնէի ծրագիրը ներկայացնել երբոնական Աղդ. Վարչովթեան Քառական ժողովոյ միջոցաւ՝ Աղդային ուշահուսանական Բնահան ժողովութեան

27. Եթէ առաջին անգամ մեր-  
ուած կամ բարեփոխեալ պիտօնէն  
ատկանեալ Դաւառային կամ Կեդ-  
րնական Վարչութեան եւ Դաւառ-

հետ ու իր մերժեալ կամ բարե-  
փոխեալ պիւտճէն անփոփոխ վերա-  
դարձնէ Աղդ. Ընդհ. Երեսփոխանա-  
կան ժողովին, այս պարագային՝ ե-  
թէ մերժուածը կ. Պոլոյ Առաջնոր-  
դական շրջանի կամ կեդրոնական  
պիւտճէն է, կեդրոնական վարչու-  
թիւնն անմիջապէս կը հրաժարի, եւ  
եթէ որ եւ է Գաւառի կը պատկանի,  
պատկանեալ Գաւառ. Ժողովը կը հրա-  
ժարի, եւ երկու կողմանց այս առ-  
թիւ անհամաձայնութեան առարկայ  
եղած կէտերու կամ խնդրոց մասին  
նոյն Գաւառի հայ ժողովրդեան ընդ-  
հանրութեան կամքին դիմում ըլլալով  
Երեսփոխանական նոր ընտրութիւն կը  
կատարուի :

Այս ընտրութիւնները պէտք է վեր-  
ջանան, առ առաւելն մինչեւ երկու  
ամիս :

28. Նորընտիր եւ վերակազմեալ  
Աղդ. Գաւառական Երեսփոխանական  
Ընդհանուր Ժողովը պարտաւոր է ան-  
միջապէս քննութեան առնել վէճի եւ  
մերժման առարկայ պիւտճէի կէտերը,  
ու մինչեւ մէկ ամիս իւր վճիռը ար-  
ձակել :

29.—Վերակազմեալ Գաւառական  
Աղդ. Ընդհանուր Ժողովոյ վճիռը՝ իրը  
կամք պատկանեալ Գաւառի Ընդհա-  
նուր Հայութեան, պարտաւորիչ պիտի  
ըլլայ ամէնուն համար :

30.—Ամէն պիւտճէ կը բաղկանայ  
երկու մասերէ :

1.—Հասոյթք, 2.—Ծախք  
Պիւտճէի մէն մի մասը կը պարունակէ .

1.—Սոլորական պիւտճէ

2.—Արտասովոր

Սովորական պիւտճէն կը կազմեն  
ընթացիկ հասոյթք և ընթացիկ ծախք :  
Արտասովոր պիւտճէն կը պարունա-

կէ բացառիկ հասոյթներ, առժամեայ  
սուրբ, բացառիկ նուիրատուութիւնք  
են են . իսկ ծախուց կողմը կ'արձանա-  
գրուին արտակարդ ձեռնարկներու  
վերաբերեալ ծախքեր, ինչպէս վար-  
ժարանաց, կաճառներու, Թանդարան-  
ներու, Հիւանդանոցներու, Եկեղեցի-  
ներու ևայլ շնութիւնք, նորոգու-  
թիւնք, տոկոսներ, վերջապէս ընթա-  
ցիկ հասութից և ծախուց չվերաբերող  
հասոյթք և ծախք :

31.—Ամէն պիւտճէի ծրագիր ան-  
կատար է՝ եթէ չպարունակէր.

Ա.—Պատճառաբանող յառաջա-  
րան մը, որուն մէջ մեկնուած լուսա-  
րանուած և պաշտպանուած լլան  
առաջարկեալ հասոյթք և ծախք :

Բ.—Իէ՛ հասութից և թէ՛ ծա-  
խուց կողմերը նշանակեալ գումարնե-  
րու հետ նախորդ տարւոյ համապա-  
տասխան թիւերը, յաւելման կամ  
դեղման պատճառաբանութեամբ :

Գ.—Հաշուեկիւուի ձեռվհասոյթք  
և ծախք ուր երեւնաց հաւասարակըշ-  
ուութեան համար հարկաւոր գումարը :

Դ.—Հաւասարակշուութեան հա-  
մար հարկաւոր երեցած գումարները  
գտնելու համար ցոյց արուած մի-  
ջոցներ:

32.—Մէն մի Գաւառական սովո-  
րական պիւտճէի հասոյթի կողմը կը  
նշանակուին՝

Ա.—Աղդային Տուրք .  
Բ.—Կալուածական հողային հա-

սոյթք .  
Գ.—Կտակներ .

Ե.—Ենթադրեալ Նուիրատուու-  
թիւնք, Հանդանակութիւնք ելն .

Զ.—Եկեղեցական կամ վանուց,  
Գանձանակի ևն. Ենթադրեալ հասոյթք :

Է. — Ա.յլ զանալան հասոյթք .

Իսկ արտասովոր պիւտճէի հասոյ-  
թից կողմը կը նշանակուին՝

Ա. — Փոխառութիւնք :

Բ. — Վաճառեալ կալուածածոց կամ  
շարժուն ստայուածոց հասոյթք :

Գ. — Բացառիկ նուիրատուու-  
թիւնք :

Դ. — Զանազանք :

33. — Մէն մի Գաւառական սովո-  
րական պիւտճէի ծախուց կողմը կը  
նշանակուին :

Ա. — Եկեղեցական ծախք

Բ. — Կրթական »

Գ. — Գիւանական »

Դ. — Տոկոսներ »

Ե. — Զանազան »

Ֆ. — Աղքատախնամ »

Ո. — Որբախնամ »

Թ. — Հիւանդանոցի եւ բժշկական  
ծախք .

Ժ. — Կալուածական անտեսութիւն  
եւ հարկեր .

Ճ. — Առաջնորդարանի և Փոխա-  
նորդարանի ծախք :

Իսկ արտասովոր պիւտճէի ծախուց  
կողմը կը նշանակուին՝

Ա. — Փոխառութիւնք .

Բ. — Գնուած շարժուն կամ ան-  
շարժ ստացուածքներու փոխարէն .

Գ. — Ենթութիւնք և նորոգութիւնք  
կալուածածոց .

Դ. — Բացառիկ ձեռնարկներու ծախք .

Ե. — Զանազանք :

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ ԵՒ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԻՒՆՔ

34.—Աղդային Սահմանադրու-  
թեան հիմնական սկզբունքներու Ա. Բ.  
Գ. Դ. և Ե. յօդուածներու, և նոյն

Աղդ. Սահմանադրութեան 5, 15,  
18, 28, 41, 44, 56, և 61րդ յօդուած-

ներու համաձայն՝ մէն մի Աղդային  
պաշտօնեայ, Աղդային մարմիններու,

ժողովներու, Խորհուրդներու, Հոգա-  
րածութեանց ևայլ անդամներ, վճար-

եալ թէ ոչ, անհատապէս և հաւաքա-  
րար անմիջապէս պատասխանատու են,

ըստ օրինասուր գասակարդութեան,  
զիրենք ընտրող Աղդ. մարմիններուն =

Ա.յս վերջիններն ալ իրենց կարգին,  
անհատապէս և հաւաքարար իրենց  
ենթակայ բոլոր Խորհուրդներու եւ

Հոգարածութեաններու հետ միասին  
պատասխանատու են Գաւառական կամ  
կեդրոնական Աղդ. Երեսփոխանական  
Ընդհանուր Ժողովներուն :

35.—Ամէն Աղդային պաշտօնէին,  
ժողովի, Խորհրդոյ և որ և է Աղդային  
մարմնոյ եւ ընկերութեան պատաս-  
խանատութիւնը, ոչ միայն բարոյա-  
պէս է այլ եւ նիթապէս Զեղ-  
ծումներու և այլ պետական օրէնքնե-  
րով պատժոյ ենթակայ գործողու-  
թեանց համար պատասխանատուները  
ենթակայ են նաև Պետական պատ-  
ժական օրէնքներով գատապարտու-  
թեան և պատժոյ :

Ամէն պաշտօնէայ, վճարեալ թէ ոչ,  
պատասխանատու է իրեն յանձնուած  
Աղդային ընչից, սեպհականութեանց,  
աւանձներու պահպանման եւ բարոյք  
մատակարարութեան :

36.—Որէկ Աղդային անհատ, պաշ-  
տօնէայ թէ ո՛չ, աշխարհական թէ

կրօնական պաշտօնի մէջ կամ պաշ-  
տօնէ գուրս, եթէ Աղդային Սահմա-  
նադրութեան ողւոյն կամ տառին հա-  
կառակ վարմանք ունենայ, եւ այս

հաստատուի, Աղդային Երեսփոխա-  
նական ժողովոյ ողուոյն մշտնինա-

որպես և կամ ժամանակաւոր կերպով կը զրկուի իւր Աղդ. իրաւունքներէն, այս է՝ ընտրող եւ ընտրելի ըլլալ, Աղդային պաշտօններու մասնակցիլ եւ կամ ընկերութեանց անդամակցիլ. եւ այս կը հրատարակուի ի լուր համայն Հայութեան:

37.—Ամէն Աղդային պաշտօնեայ, ժողովներու, Խորհուրդներու, Հոգաբարձութեանց, Ընկերութեանց անդամներ, անհատաբար և հաւաքարար այն ժամանակ միայն պատասխանատութենէ կ'ազատին, երբ կանոնաւոր հաշուետուութիւն կը կատարեն, եւ վաւերացուելով մաքոր հաշուետուութեան վիայական կըստանան:

38.—Ըստ Աղդային Սահմանադրութեան 46<sup>րդ</sup> յօդուածի չորրորդ եւ վեցերորդ պարբերութեանց, թէ՛ կեղրոնի և թէ՛ Գաւառներու մէջ ոչ մի Աղդային անհատ, ոչ մի Աղդային պաշտօնեայ, ոչ մի Ժողովոյ, Խորհրդոյ կամ Հոգաբարձութեան անդամ անհատաբար թէ՛ հաւաքարար չէ կարող ո'եւէ Աղդային կալուած դնել, վաճառել, գրաւի դնել, որ և է կալուածի շնութեան կամ վերանորոգութեան ձեռնարկել, որևէ կալուած, սեփականութիւն, գումար իւր կամ ուրիշ անհատի մը անուան արձանագրել եւ արձանագրել տալ, փոխառութիւն կամ փոխառութիւն կիրել, Աղդ. որեւէ իրաւունք կամ սեփականութիւն թողով կամ նուիրել, վտանգի ենթարկել, առանց կեղր. Վարչութեան հաւանութեան, կեղրոնական երեսփոխանական ժողովոյն վաւերացման և կ. Պոլոյ Պատրիարքի կնքով հաստատութեան:

39.—Վերոդրեալ թիւ 38<sup>րդ</sup> յօդուածի արամագր թեանց ենթակայ են բոլոր վանքերու վանահայրեր, միաբանութիւններ, Երևանագետայ Պատրիարք, միաբանութիւն, Սայ եւ Աղթամարայ կաթողիկոսութիւնները, եւ անոնց միաբանութիւնները:

40.—Ամէն Աղդային պաշտօնեայ կամ որ և է Աղդային մարմնոյ, ժողովներու, Խորհուրդներու, Հոգաբարձութեանց անդամ, վճարուած թէ ոչ, իր պաշտօնավարութեան չըջանին լրանալուն, եւ եթէ անկէ առաջ հրաժարի՝ հրաժարականէն յետոյ, մինչեւ որ անհատապէս և հաւաքարար համարատուութեամբ մաքոր հաշուետուութեան վիայական չ'ստանայ, չկընար ընտրուի եւ կամ կոչուիլ Աղդային որ եւ է պաշտօնի:

41.—Ոչ մի Աղդային անհատ, Հաստատութիւն կամ Ընկերութիւն իրաւունք ունի յանուն եւ ինպաստ Աղդ. Հաստատութեանց գրամ հաւաքել, նուէր կամ կտակ ընդունիլ, միջամբտել այսպիսի գործողութեանց՝ առանց պատկանեալ Փուառական կամ կեղր. Աղդ. Վարչութեան կողմանէ գրաւոր արտօնութիւն ստանալու:

42.—Ոչ մի անհատ կամ Աղդային պաշտօնեայ և կամ մարմին կարող է իւր քով պահել եւ կամ այլոց ի պահ առաջ Աղդ. Հաստատութեանց, Ընկերութեանց պատկանեալ որ եւ է գրամ կամ արմեթուղթ, սղարտամարհակ, կամ արմեթաւոր որ եւ է նիւթ, կալուածութուղթ եւ կամ հաշուական տոմար եւ այլ թուղթեր:

43.—Աղդային Հաստատութեանց, Ընկերութեանց գանձապահներ պարտաւոր են, ի բաց առեալ ընթացիկ առօրեայ ծախքերու յատուկ փոքր գումարներ, մեացորդ պատրաստ գրամը ամբողջապէս վստահելի գրամատան յանձնել, ընթացիկ հայւ բանալով անոնց հետ: Սակայն պահպայի մէջ յանուն Հաստատութեան պիտի բացուի հաշիւր եւ առնուազն երկու ստորագրութիւն պիտի ցոյց արուի գանձման համար:

44.—Ամէն տեղ որ որ Աղդային շնութիւն եւ կալուած կայ, պատկանեալ թեմի Աղդ. մարմինը պարտաւոր է ապահովագրութեան դնել:



ՄՄ Հայագիտական գրադարան



MAL014125

